

1.4.2. Բնակչության դրամական եկամուտներ ու ծախսեր, աշխատավարձ և այլ եկամուտներ

Բնակչության դրամական եկամուտների և ծախսերի հաշվեկշիռը: Բնակչության դրամական եկամուտները 2002թ. հունվար-հուլիսին կազմել են 404406.6 մլն.դրամ, իսկ դրամական ծախսերը՝ 406254.6 մլն.դրամ: Դրանց աճի տեմպերը 2001թ. հունվար-հուլիսի համեմատ կազմել են, համապատասխանաբար՝ 110.5 և 109.1%:

Դրամական եկամուտների օգտագործումը

	2001		2002		
	հունվար-հուլիս		հունվար-հուլիս		
	մլն.դրամ	տեսակարար կշիռը եկամուտներում, %	մլն.դրամ	տեսակարար կշիռը եկամուտներում, %	տեսակարար կշռի տոկոսային փոփոխություն
Դրամական եկամուտներ որից օգտագործվել է՝	365855.1	100	404406.6	100	-
ապրանքների գնման և ծառայությունների վճարման համար	320711.4	87.7	368667.8	91.1	3.4
պարտադիր վճարումների և կանաչավոր մուծումների համար	15636.7	4.3	19842.4	4.9	0.6
ավանդների և արժեթղթերի ձևով խնայողությունների հավելած	10071.9	2.7	-10558.5	-2.6	-5.3
այլ ծախսեր	26080.3	7.1	28302.9	7.0	-0.1
Դրամական ծախսեր, ընդամենը	372500,3	-	406254,6	-	-
Դրամի աճ (+) կամ նվազում (-) բնակչության ձեռքին	-6645.2	-1.8	-1848.0	-0.4	1.4

Բնակչության իրական տնօրինվող դրամական եկամուտները: Բնակչության իրական տնօրինվող դրամական եկամուտները (եկամուտները՝ հանած պարտադիր վճարումները, հաշվի առած սպառողական գների ինդեքսների փոփոխությունները) 2002թ. հունվար-հուլիսին 2001թ. հունվար-հուլիսի նկատմամբ աճել են 8.0%-ով:

Աշխատանքի վարձատրություն: 2002թ. հունվար-հուլիսին, ըստ յուրաքանչյուր ամիս վիճակագրական հաշվետվություն ներկայացնող մոտ 9000 սուբյեկտների հաշվետվությունների նախնական տվյալների գնահատման, զբաղվածների միջին անվանական աշխատավարձը կազմել է 25346 դրամ և 2001թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ՝ ավելացել 10.9%-ով: Ընդ որում, բյուջետային կազմակերպություններում զբաղվածների աշխատավարձը, որի գնահատումը կատարվել է մոտ 4000 բյուջետային կազմակերպություններից ստացվող եռամսյակային հաշվետվությունների օպերատիվ տվյալների հիման վրա, կազմել է 15595 դրամ և 2001թ. նույն ժամանակաշրջանի համեմատ՝ ավելացել 9.3%-ով, իսկ ոչ բյուջետային կազմակերպություններում զբաղվածներինը՝ համապատասխանաբար 34161 դրամ և աճել 14.0%-ով:

Անվանական միջին աշխատավարձի փոփոխությունը նախորդ տարվա նկատմամբ և տատանումն ըստ տնտեսության ճյուղերի 2002թ. հունիսին

	Անվանական միջին աշխատավարձը, դրամ		% -ով ընդամենի նկատմամբ		% -ով նախորդ տարվա նկատմամբ	
	հունիս	հունվար-հունիս	հունիս	հունվար-հունիս	հունիս	հունվար-հունիս
Ընդամենը	26710	25111	100.0	100.0	114.8	110.4
Արդյունաբերություն	43122	38620	161.4	153.8	121.9	119.8
Գյուղատնտեսություն	21030	18791	78.7	74.8	115.8	108.9
Անտառտնտեսություն	11633	10120	43.6	40.3	113.6	96.5

1.ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

	Անվանական միջին աշխատավարձը, դրամ		% -ով ընդամենի նկատմամբ		% -ով նախորդ տարվա նկատմամբ	
	հունիս	հունվար-հունիս	հունիս	հունվար-հունիս	հունիս	հունվար-հունիս
Տրանսպորտ	47870	43103	179.2	171.7	118.0	107.2
Կապ	56349	52838	211.0	210.4	121.4	117.1
Շինարարություն	47402	42990	177.5	171.2	113.6	110.7
Առևտուր, հանրային սնունդ	17951	18608	67.2	74.1	173.4	173.6
Բնակարանային-կոմունալ տնտեսություն, կենցաղսպասարկում	40131	32529	150.2	129.5	131.5	121.5
Առողջապահություն, ֆիզկուլտուրա և սոցիալական ապահովություն	13138	12765	49.2	50.8	105.3	101.6
Կրթություն	14073	13663	52.7	54.4	109.1	108.0
Մշակույթ	11417	10947	42.7	43.6	105.8	107.2
Արվեստ	12357	12162	46.3	48.4	82.7	99.8
Գիտություն և գիտական սպասարկում	20949	20444	78.4	81.4	117.5	111.5
Վարկավորում և ապահովագրություն	74233	87335	277.9	347.8	95.9	95.6
Կառավարման ապարատ	39333	37358	147.3	148.8	116.6	113.7
Այլ	29979	24927	112.2	99.3	119.0	105.9

2002թ. հունիսին սոցիալական ոլորտի ճյուղերում զբաղվածների անվանական միջին աշխատավարձը տատանվել է ընդհանուր միջինի 42.7%-ից (մշակույթ) մինչև 52.7%-ի (կրթություն) սահմաններում: Վարկավորման համակարգում անվանական միջին աշխատավարձն ընդհանուր միջինին գերազանցել է 2.8 անգամ, կապի համակարգում՝ 2.1, շինարարության մեջ և տրանսպորտում՝ 1.8, արդյունաբերության մեջ՝ 1.6, կառավարման համակարգում, բնակարանային-կոմունալ և բնակչության կենցաղսպասարկման ոլորտում՝ 1.5 անգամ: